

169

Դեմոսթր  
185

31075  
69

Հիշում ըստ Գրքի Խմբագրի Թիւրք շահ  
Գրքաւար Էն-Իյն-Յի Զարթուր

4 հարց  
1898 թ.  
Լուսին

# ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՐՂՆՓՈՒ ԳՆԻՆՆՈՒԹԵՆ ՀՐԵՈՍԱՆՆԵՐՑ  
ԸՌՆՔԵԼՈՒԿԱՆ ՍՈՒՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ

*Handwritten signature*

*Handwritten signature*

ԱՌԱՋԻՆ ԳՐՔՈՅԿ

242

ԱՂՕԹՔՆԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԳԼԽԱՌ ՏՕՆԵՐԻ  
ՀԱՄԱՌՕՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

Պետական իգական գիմն սգիծնների պատրաստական  
դասարանների հայ աշակերտուհիների համար:

Կ Ա Ջ Մ Ծ Ց

ԵՂՆԻԿ ՔԱՀԱՆԱՑ ԵՐՁՆԿԵԱՆՑ

Ուսուցիչ Տփիսի առաջին և երկրորդ իգական գիմնադիծնների և «Վագե-  
տեան Կորպուս» գիմնարական ուսումնարանի:

220

Երեւան  
Ե-84

Թ Ի Ց Լ Ի Ս

Տպարան ՄՆ. Մարտիրոսեանցի  
Միջայեկեան փողոց, տան № 81.  
1898.

220  
573-67  
21075

575-67



# ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ

Վճ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՐՂԱՓՈՒ ԴԱԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ  
ԱՌՆԵԼԵԿԱՆ ՍՈՒՐԻ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԱՌԱՋԻՆ ԳՐՔՈՅԿ



«ԱՂԹՔՆԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԵՐԻ  
ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

1004  
48961  
1998  
Գ

Պետական իգական գիմնագիտությունների պատրաստական  
դասարանների հայ աշակերտուհիների համար:

Կ Ա Ջ Մ Ե Ց

## ԵՋՆԻԿ ՔԱՀԱՆԱՅ ԵՐՁՆԿԵԱՆՑ

Ուսուցիչ Տփիսի առաջին և երկրորդ իգական գիմնագիտությունների և «Կարե-  
տեան Կորպուս» գիմնուրական ուսուցիչներին:

Թ Ի Ց Լ Ի Ս

Տպարան ՄՆ. Մարտիրոսի  
Միքայելյան փողոց, տուն 36  
1898.



Ց 2004

11663

2004

Ի կատարումն Բարձու հրամանի Սրբազնասուրբ Քահանայապետի ազգիս՝ Տեառն Տեառն Մկրտչի Առաջնոյ, ընթերցեալ զայս դասագիր Կրօնի սչ գտի ՚ի սմա զբանս և զբառս հակառակ դաւանութեան մերս ուղղափառ Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ. ՚ի ստուգութիւն որոյ իմովս իսկական ստորագրութեամբ և զրօշմամբ անուանական կնքոյս վկայարանեմ: Ի 23 Յունվարի 1898 ամի ՚ի Սուրբ Էջմիածին:

Սուքիաս Արքեպիսկոպոս Պարզեանց:

Ըստ Բարձու հրամանի Վեհ. Հայրապետի ազգիս, Դիւանս համաձայն վերոգրեալ յայտարարութեան թոյլատրել տպագրել, զոր և վաւերացուցանէ ստորագրութեամբ և զրօշմամբ Դիւանական կնքոյ: Ի 29-ն յունվարի 1898 ամի ՚ի ք. Տփլիս, թ. 117:

Ի տեղի Դիւանապետի՝ Կորին Վարդապետ:

Дозволено цензурою. Тифлисъ, 3 Февраля 1898 года.



185-2014  
հֆ 184

## ԵՐԿՈՒ ԽՕՍԻ

Յնդհանրապէս նկատուած է, որ պետական դպրոցներում կրօնուսուցչի պաշտօն ստանձնող արժանապատիւ հայրերը հանդիպում են մեծամեծ դժուարութիւնների՝ չունենալով մի յարմարաւոր ձեռնարկ այդ դպրոցների համար: Թէպէտ և կրօնի դասատուութեան համար կան լոյս տեսած բաւականին լաւ դասագրքեր, բայց նրանք իրանց ընդարձակ նիւթով և լայն ծաւալով և ոմանք մինչև անգամ իրանց գրաբարախառն լեզուով ու զարձուածքներով, որոնցից ոմանք էլ ընդունուած են որպէս ձեռնարկ պետական դպրոցներում,—անհամապատասխան են այդ դպրոցներին, ուր այդ առարկայի աւանդման համար սուղ ժամանակ է տուած և ուր ուսանող սանիկների մի մասն էլ տկար է իւր մայրենի լեզուի մէջ:

Չորս տարուայ իմ ուսուցչական փորձերը պետական դպրոցներում՝ բերել են ինձ այս հաստատ համոզման, որ այդ դպրոցների կրօնի դասաւանդութեան համար անհրաժեշտ է կազմել մի այնպիսի դասագիրք, որի մէջ այդ առարկայի աւանդման համար որոշած ժամանակի չափը և աւանդելի նիւթն ու նրա ծաւալը նկատի առնուած լինէին և որի մէջ ամփոփ կերպով բովանդակուած լինէին ամենապիւտաւոր կրօնական գիտելիքները, որոնք անհրաժեշտ են ամեն մի հայ աշակերտուհու և աշակերտի համար:

Ձեռք գնդկելով այս կարևոր գործին՝ ես արդէն պատրաստել եմ պետական միջնակարգ իգական դպրոցների համար կրօնագիտութեան մի ընդհանուր ձեռնարկ, որի մէջ բոլոր դասա-

բաններում աւանդելի կրօնի նիւթերը— դասընթացները՝ տեղի, ժամանակի և սանիկների գիտակցութեան համաձայն՝ որոշուած— դասաւորուած են և որոնք հետզհետէ պիտի լոյս տեսնեն առանձին գրքոյկներով:

Սոյն գրքոյկը յիշեալ դպրոցների պատրաստական դասարանների կրօնի նիւթը— դասընթացն է և կրում է «Աղօթքների բացատրութիւնները և զլիսաւոր տօների համառօտ պատմութիւնները» խորագիր:

Այս գործը յաջողութեամբ պուխ բերելու համար ես օգտուել եմ առհասարակ առաջնակարգ նշանակութիւն ունեցող կրօնի դասագրքերից, մերթ համառօտելով, մերթ ընդարձակելով և տեղտեղ ևս մի քանի կտորներ նոյնութեամբ յառաջ բերելով:

Սա իբրև առաջին փորձ թերևս ունենայ և իւր պակասաւոր կողմերը, որոնց ցոյց կայ հետզհետէ ժամանակը, միայն վստահանում եմ կարծել, որ այսպիսի մի ձեռնարկի տուած օգուտն անհամեմատ աւելի կ'ըլնի. ուստի հրաւիրում եմ իմ պաշտօնակից՝ պետական դպրոցների կրօնուսոյց՝ արժանապատիւ հայրերի ուշադրութիւնը:

#### ԵԶՆԻԿ ՔԱՅԱՆԱՅ ԵՐԶՆԿԵԱՆ

Դ 29-ն նոյեմբերի 1897 ամի

ի ք. Տփլիս:

#### ՄԱՍՆ ԱԼԱԶԻՆ:

Ա Ղ Օ Թ Ք Ն Ե Ր:

Աղօթք եւ նրա արտաքին նշանները:

Աստրծուն երկիւղածութեամբ դիմելը և նրա հետ խօսելը կոչվում է աղօթք:

Աղօթքով մենք խնդրում ենք Աստծուց այն, ինչի համար մենք կարիք ունինք. շնորհակալութիւն ենք յայտնում նրան Իւր ողորմութեան և տուած բարիքների համար և փառաբանում ենք Իւր կատարելութիւնների համար: Այս պատճառով էլ մեր աղօթքները լինում են— ա)՝ խնդրողական, բ)՝ շնորհակալական և գ)՝ փառաբանական: Բայց յաճախ պատահում է, որ մեր հոգու այս բոլոր դպացումները միացած և խառնուած են արտայայտվում մեր աղօթքների մէջ — այսպէս՝ օր. աղօթքը երբեմն սկսվում է գոհացողականով, յետոյ անցնում է փառաբանականի և վերջանում է խնդրուածներով այն կարիքների համար, ինչոր մեզ տալու համար նրան հաճելի է, կամ սկսվում է փառաբանականով, անցնում է գոհացողականի և վերջանում խնդրուածներով— և այլն:

Աղօթքով մենք դիմում ենք նմանապէս Աստուածամօրն, սուրբ հրեշտակներին և սուրբ մարդոց, բայց ոչ այնպէս, ինչպէս Ատոծուն: Սուրբ Աստուածամօրն և սրբերին դիմելով խնդրում ենք, որ նրանք մեզ համար բարեխօս լինին Աստծու առաջ:

Մենք աղօթում ենք ոչ միայն մեզ համար, այլ և ուրիշներին, — թէ կենդանիների և թէ ննջեցեալների համար:

Երբեմն լինում են այնպիսի հանգամանքներ, որ մարդ չէ կարողանում աղօթել ազատ և յայտնի, որքան և ցանկանար նա: Այսպիսի դէպքերում կարելի է գործածել մտաւոր աղօթքներ և այդ լինում է, երբ աղօթում է միայն հոգով և մտքով և չէ արտասանում իւր աղօթքները խօսքերով կամ նշաններով:

Մենք աղօթելիս գործ ենք անում այս հետեւեալ արտաբերիչ նշանները, — այն է՝ աչքերը դէպի երկինք ենք դարձնում, գլուխը խոնարհեցնում, ձեռքերը տարածում, երկրպագում, ծունկ չորում, հոգոց հանում, համբուրում սուրբ պատկերներին և վառում նրանց առաջ կանթեղներ ու մսմբ: Այս նշաններով... մենք արտայայտում ենք Աստծուն մեր անձնուիրութիւնը, խնդրուածքը՝ ողորմութեան համար, շնորհակալութիւնը՝ ստացած բարիքների համար և երկիւզածութիւնը՝ նրա մեծութեան առաջ:

Աղօթքի ամենագլխաւոր նշանն է խաչակնքելը: Երեսին խաչակնքելը լինում է այսպէս. աջ ձեռքի երեք մատները միացնելով նախ դնում ենք ճակատի վերայ, յետոյ կուրծքի և ապա ձախ և աջ թևերի մօտ, իսկ վերջն էլ՝ մէջ տեղը — կուրծքի վրայ: Այս նշանով մենք արտայայտում ենք հաւատ դէպի այն, ինչ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը սովորեցրեց մեզ և ինչ որ արեց նա մեր փրկութեան համար: Ձեռքը դնելով ճակատին և Աստծու

անունը տալով՝ խոստովանում ենք մեր հաւատը դէպի Հայր Աստուած, Որին հաւասարագոր է Որդին և Սուրբ Հոգին: Ճակատից ձեռքը իջեցնելով և դնելով սրտի վերայ՝ խոստովանում ենք Երրորդութեան երկրորդ անձի — Միածին Որդու — երկնքից իջնելը՝ աշխարհ գալը և հայրական տնօրէնութիւնների կատարումն: Ձեռքը տանելով ձախ, ապա աջ թևերի կողմերը՝ խոստովանում ենք Սուրբ Հոգու դժոխք իջնելը և այնտեղից սրբերի հոգիները դէպի աջ — արքայութիւն տանելը, իսկ «ամէն» ասելով՝ խոստովանում ենք մեր հաւատի ճշմարտութիւնը: Խաչակնքելով՝ նաև ցանկանում ենք սրբել սուրբ խաչի զօրութեամբ մեր միտքը, զգացմունքը, ցանկութիւնը և գործունէութիւնը: Քացի այս՝ խաչակնքելով աղօթքի և առ հասարակ ամեն մի գործի սկսելու ժամանակ, մենք ցոյց ենք տալիս, թէ յոյս չենք դնում ոչ մեր ոյժերի և ոչ մարդոց օգնութեան վերայ, այլ ապաւինում ենք միայն Աստծու օգնութեանն, որ մեզ Քրիստոսի Սուրբ Խաչի զօրութեամբ հեռու պահէ ամեն տեսակ ձախորդութիւններից:

### ԱՂՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ, ԺԱՄԱՆԵՎԸ ԵՒ ԱՍԵՂՈՒ ԿԵՐԳԸ:

Աստուած գտնվում է ամեն տեղ. նա ամեն տեղ լսում և տեսնում է մեզ: Այս պատճառով կարելի է աղօթել ոչ միայն Աստծու անուանը նուիրած սուրբ տաճարներում, այլ և ամեն տեղ: Քրիստոնէականներից ոմանք սովորութիւն ունին օծուած պատկերներ պահել տան մէջ՝ որոշեալ տեղ, սենեակների անկիւններում, երբեմն առանձին պահարաններում, դէպի որը դարձնելով իրանց երեսները՝ աղօթում են: Հայերս այդ սովորութիւնը չունինք. օծուած պատկերներն եկեղեցում ենք պահում իբրև նուիրական առարկայ, որին արժան չէ տունը:

Սուրբ պատկերները ծառայում են մեզ նրա համար, որ նայելով նրանց՝ յիշենք նրանց նախատիպն և ուշադրութեամբ ու երկիւղածութեամբ աղօթենք: Այս պատկերները, նայելով մեր ջերմեռանդութեան և կարողութեան, շատ անգամ զարդարում ենք զանազան զարդերով և նրանց առաջ վառում ենք կանթեղներ ձիթով և մեղրամոմեր: Լոյսը, որ վառվում է պատկերների առաջ, արտայայտում է մեր հաւատի լոյսը և մեր սիրոյ տարութիւնը:

Մենք Աստծուց կարող ենք ստանալ բոլոր հարկաւոր բաները մեր կեանքի համար: Նա ամեն բոլոր տալիս է մեզ Իւր ողորմութիւնը: Նրա մեծ գործերը մենք մըշտապէս տեսնում ենք: Ուրեմն մենք միշտ կարիք ունինք խնդրելու Աստծուն, շնորհակալութիւն անելու և փառաբանելու նրան, հետեապէս և միշտ պէտք է աղօթենք նրան: Բայց որովհետեւ շատ ժամանակ է հարկաւոր լինում երկրաւոր կեանքի պիտոյքները հոգալու համար, ուստի աղօթելու որոշեալ ժամերը հետեալներ են. ա)՝ առաւօտեան, երբ քնից զարթնում ենք. բ)՝ օրուայ ընթացքում, այն է՝ գործի (աշխատանքի կամ ուսման) սկսելու և վերջացնելու ժամանակ, հաց ուտելուց առաջ և վերջը և գ)՝ գիշերը՝ քնելուց առաջ:

Աղօթելիս մենք ուղիղ և երկիւղածութեամբ կանգնում ենք, եթէ պատկեր կայ, պատկերի առաջ, և եթէ ոչ՝ երեսներս դէպի արեւը դարձնելով և խաչակնքելով ուշադրութեամբ և առանց շտապելու՝ ասում ենք մեր աղօթքները: Աղօթքը վերջացնելուց յետոյ դարձեալ խաչակնքում ենք երեսներս և երկրպագութիւն տալիս:

**ԱՂՈԹՔՆԵՐԻ ՀԱՄԱՐՈՑ ԲՆՅՏԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ:**

№ 1. Համառօտ փառաբանութիւն Աստուծոյ:

**„Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Ամէն“:**

Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով (օգնութեամբ): Ամէն:

Այս խօսքերով ենք մենք—քրիստոնեաներս՝ սկսում մեր գործը և՛ արտասանելով սուրբ Երրորդութեան անունը՝ արտայայտում մեր հաւատը, որ ամենայն ինչ կամենում ենք գործել Աստծու անունով, այսինքն՝ Աստրծու փառքի համար, Աստծու օգնութեամբ:

Աստծուն մենք անուանում ենք Հայր, Որդի և Հոգի Սուրբ, որովհետեւ նա էութեամբ մի է, իսկ անձնաւորութեամբ՝ երեք: Առաջին անձն է Հայր, երկրորդը՝ Որդի և երրորդը՝ Հոգի սուրբ: Այդ երեք անձինքն ունին մի անուն—Աստուած: Նրանք ունին հաւասար գօրութիւն, պատիւ և կազմում են մի էութիւն (գոյութիւն): «Ամէն» խօսքը նշանակում է՝ ճշմարիտ, այգպէս, թող լինի այգպէս. և այլն:

№ 2. ԱՂՈԹՔ ԲԻՍՏՈՍԻ ԽՆՉԵԼՈՒԹԵՆՆ:

**Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեան մեզ—(երեք անգամ):**

Սուրբ Աստուած, սուրբ և հոգի (գորեղ), սուրբ և անմահ, որ մեզ համար խաչուեցար, ողորմիր մեզ:

Այս աղօթքը՝ ըստ աւանդութեան՝ ասուած է Քրիստոսի խաչից իջեցնելու ժամանակ, ուտտի և ասվում է միմիայն ՚ի դէմս Աստուծու Որդու:

Սուրբ և Աստուած ենք անուանում՝ Նրան, որովհետեւ նա Աստուծու Որդի է և ինքն Աստուած, և չկայ Նրա մէջ ոչինչ մեղք: Հզօր ենք անուանում, որովհետեւ նա՝ ամենակարող լինելով՝ յաղթեց մահուն:

Անմահ ենք անուանում, որովհետեւ նա յաւիտենական է, թկալէտ և մարմնով մեռաւ, բայց Աստուածութեամբ անմահ է և էակից Հօր Աստուծու և Սուրբ Հոգու հետ:

Այս աղօթքով մենք խնդրում ենք Աստուածորդուց, ա)՝ որ Իւր Խաչի և մահուան արգիւնքով ներէ մեր մեղքերը, մարբէ մեր հոգին և սրբէ մեր սիրտը: Մեղք ասուածն—անուանվում են մեր այն խօսքերը, ցանկութիւնները, խորհուրդները և գործերը, որոնք հակառակ են Աստուծու կամբին. բ)՝ որ իբրև Տէր և ողորմած Փրկիչ—ողորմի և օգնի մեզ:

№ 3. ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂԹՔ:

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո: Եկեսցէ արքայութիւն Քո: Եղիցին կամք Քո, որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազօրդ սուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեր

Թողումք մերոց պարտապանաց: Եւ մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէ: Զի Քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս: Ամէն:

Մեր հայր, որ երկնքումն ես, սուրբ լինիքս անունը: Գայ Քո թագաւորութիւնը: Լինի Քո կամքը ինչպէս երկնքումը, այնպէս էլ երկրիս վրայ: Մեր ամենօրուայ հացը այսօր էլ սուր մեզ: Մեր պարտքը թող մեզ, ինչպէս որ մենք էլ մեր պարտապաններին ենք թողնում: Մի՛ ձգիր մեզ փորձանքի մէջ, այլ ազատիր մեզ չարից: Որովհետեւ Քոնն է թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը յաւիտեանս.—Ամէն:

Այս աղօթքը մենք անուանում ենք Տէրունական, որովհետեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսը սովորեցրեց: Այս աղօթքը՝ սկսուելով կոչումով, բաղկացած է եւթն խընդրուածներից և վերջանում է փառաքանութեամբ:

Կոչումն է.—Նայր մեր, որ յերկինս ես: Մենք անուանում ենք Աստուծուն հայր, ա)՝ որովհետեւ Աստուած Իւր ողորմութեամբ մեզ—բրիտաններինս—Իւր որդի անուանեց. բ)՝ որ նա մեզ սիրում է ինչպէս հայր և մեր բոլոր բարի գործերումն էլ օգնում. գ)՝ մենք պէտք է գիմենք Նրան սիրով և յուսով, ինչպէս երեխաներն իրանց հօրը:

Մենք Աստուծուն անուանում ենք Երկնաւոր հայր այն պատճառաւ, որ նա—թէև ամենուրէք է, բայց Իւր փառաց աթոռն ունի երկնքում, ուր ապրում են սուրբ հրեշտակները և բացի այդ՝ յիշեցնում է, որ աղօթելիս

պէտք է թողնենք երկրային բաները և մտածենք միայն երկնայինի մասին:

*Առաջին խնդրուածք.*—**„Սուրբ եղիցի անուն Քո“:** Այս խօսքերով մենք խնդրում ենք, որ Աստուած օգնէ մեզ ապրել սրբութեամբ և մեր բարի դործերով տարածել Նրա սուրբ անունը և փառքը մարդկերանց մէջ՝ այնպէս, որ նրանք էլ տեսնեն և փառաբանեն Նրան:

*Երկրորդ խնդրուածք.*—**„Եկեացէ արքայութիւն Քո“:** Այս խօսքերով մենք խնդրում ենք, որ Աստուած հաստատելով երկրի վերայ իւր սուրբ եկեղեցին—չնորհաց թագաւորութիւնը—և մեզ ընդունելով Նրա ծոցը՝ օգնէ մեզ լինել ճշմարիտ Նրա որդիք, այն է՝ լինել քրիստոնեաներ ոչ միայն անուամբ, այլ և կեանքով:

*Երրորդ խնդրուածք.*—**„Եղիցին կամք Քո որպէս յերկինս և յերկրի“:** Այս խօսքերով մենք խնդրում ենք Աստուծն, որ Նա օգնէ մեզ կատարելու այս երկրում Նրա սուրբ կամքը այնպէս, ինչպէս հրեշտակները կատարում են երկնքում և սրա հետ միասին էլ յայտնում ենք պատրաստակամութիւն Նրանից ստանալու այն ամենը, ինչ որ Նրան հաճելի կ'լինի մեզ տալու համար:

*Չորրորդ խնդրուածք.*—**„Ձհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր“:** Այս խօսքերով մենք խնդրում ենք, որ Աստուած տայ մեզ իւրաքանչիւր օրուայ կարևոր պիտոյքները մեր գոյութեան համար՝ ինչպէս մարմնաւոր, այնպէս և հոգևոր, այսինքն՝ կերակուր, հանդերձ, բնակարան, Աստուծոյ խօսքը—խրատ և Քրիստոսի կենարար մարմնոյ և Արեան հաղորդութիւն:

*Հինգերորդ խնդրուածք.*—**„Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեր թողումք մերոց պարտապանաց“:** Այստեղ պարտք նշանակում է մեղքերը: Մենք պարտաւոր ենք կատարել Աստուծու պատուիրանները և երբ չենք կատարում, նշանակում է—մնում ենք Նրան պարտական. իսկ «մեր պարտապաններ» անուանվում են այն մարդիկ, որոնք որևէ բանով մեղաւոր են մեր առաջ: Ուրեմն մենք խնդրում ենք, որ Աստուած ների մեզ մեր պարտքերը—մեղքերը այնպէս, ինչպէս որ մենք էլ ներում ենք մեր առաջ մեղաւոր անձանց: Որովհետև նա խոստացել է մեզ ներել մեր մեղքերը այն դէպքում միայն, երբոր մենք էլ մեր կողմից կը ներենք մեր դէմ մեղանշող մարդկերանց: Սրանից երևում է, որ եթէ չ'նրերենք՝ Աստուած էլ մեզ չի ներիլ:

*Վեցերորդ խնդրուածք.*—**„Մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն“:** Փորձութիւն անուանվում են կեանքի այն դէպքերը, որոնց ժամանակ կարող ենք ընկնել մեղքի մէջ: Այս փորձութիւնները յառաջ են գալիս մեր մարմնական թուլութիւնից, մարդկերանց վատ օրինակներից և գայթակղութիւնից: Մենք խնդրում ենք Աստուծուն, որ Նա հեռացնի մեզանից այսպիսի փորձութիւնները: Բայց եթէ Աստուծն հարկաւոր է փորձութիւններով հաստատել մեր հաւատը և ամրացնել մեզ բարի կեանքի մէջ, այն ժամանակ խնդրում ենք, որ Նա օգնէ մեզ յաղթել նրանց և պահպանել մեզ մեղքից:

*Եօթներորդ խնդրուածք.*—**„Այլ փրկեան զմեզ ՚ի չարէ“:** Այս խօսքերով մենք խնդրում ենք Աստուծուն, որ Նա ազատի մեզ ամեն տեսակ չարութիւնից,

ձախորդութիւններից, դժբաղդութիւններից և պաշտպանի մեզ նենգաւոր լիզու ունեցող մարդկերանց վատ ազդեցութիւնից:

Փառաքանութիւն. — „Ձի Քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս: Ամէն“: Այս խօսքերով մենք արտայայտում ենք փառաքանութիւն և յոյս մեր խնդրուածներն ստանալու համար: Ընդունելով, որ եռանձնեայ Աստուածութեանն է պատկանում յաւիտենական թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը՝ մենք դորանով ցոյց ենք տալիս, որ նա ունի ոյժ և կարող է կատարել մեր խնդրուածները: Նրա յաւիտենական փառքն այն է, որ իւր ստեղծուածները լինեն բարի և ողորմած:

№ 4. ԱՂՈԹՔ ԳԼՍԻՑ ԱՌԱՋ:

Ամենաբարի Աստուած, առաքեա առ մեզ զչնորհս Հոգւոյդ Քո սրբոյ, զի պարգևեսցէ մեզ զմիտս և կազդուրեսցէ ըզզօրութիւնս հոգւոց մերոց, որպէս զի մեր ընդունելով զաւանդեալ մեզ ուսմունս, զարգասցուք Քեզ Ստեղծողիդ մերում ի փառս, ի մխիթարութիւն ծնողաց մերոց, յօգուտ եկեղեցւոյ և Հայրենեաց:

Ամենաբարի Աստուած, ուղարկիր դէպի մեզ Քո սուրբ Հոգւդ շնորհքը, որ մեզ միտք պարգևէ և զօրացնէ մեր հոգևոր կարողութիւնները, որպէս զի մենք ընդունելով մեզ տուած ուս-

մունքը, մեծանանք Քեզ Ստեղծողիդ փառք տալու, մեր ծնողացը մխիթարելու և եկեղեցուն ու Հայրենիքին օգտակար լինելու:

Այս աղօթքում մենք Աստծուն անուանում ենք ամենաբարի և խնդրում ենք, ա)՝ որ նա ուղարկէ մեզ շնորհք, այն է Սուրբ Հոգու ոյժ. բ)՝ խոստովանում ենք, որ Սուրբ Հոգու շնորհքը տալիս է հոգևոր զօրութիւն, այն է միտք, յիշողութիւն, ուշադրութիւն և զօրացնում է նրանց, որոնք հարկաւոր են ուսումնառութեան ժամանակ և գ)՝ յայտնում ենք, թէ մենք ուսում ենք առնում և մեծանում, որ մեր բարի գործերով մեր Ստեղծողին փառք տանք, մեր ծնողներին մխիթարենք և մեր Եկեղեցուն ու Հայրենիքին օգուտ բերենք:

№ 5. ԱՂՈԹՔ ԳԼՍԻՑ ՅԵՏՈՅ:

Գոհանամք զՔէն, Արարիչ, զի արժանի արարեր զմեզ շնորհաց Քոց՝ ընդունելութեան ուսմանս: Օրհնեա՛ զմեծաւորս, զծնողս և զուսուցիչս մեր, որք առաջնորդեն մեզ ՚ի գիտութիւն բարութեան և տնօր կարողութիւն ՚ի շարունակութիւն ուսմանս այսօրիկ:

Ջնորհակալ ենք Քեզանից, Արարիչ, որ Քո սուրբ շնորհիւ արժանացրիր մեզ ուսումունք ստանալու: Օրհնիր մեր մեծաւորներին, ծնողներին և ուսուցիչներին, որոնք առաջնորդում են մեզ բարի բաներն իմանալու: Եւ տնօր մեզ կարողութիւն՝ շարունակելու այս ուսումը:

Այս աղօթքով մենք դառնում ենք դէպի մեր Արարիչ Աստուածը և շնորհակալութիւն ենք յայտնում Նրան, որ Իւր ողորմութեամբ մեզ արժանացրեց ուսում ստանալու. ապա (սնդրում ենք, ա)՝ որ Նա օրհնի մեր մեծերին, ծնողներին և ուսուցիչներին, որոնք օգնում են մեր ուսման և առաջնորդում են մեզ դէպի բարին և բ)՝ որ տայ մեզ ոյժ և կարողութիւն, որպէս զի այսուհետեւ էլ շարունակենք մեր ուսումը:

№ 6. ԱՂՈԹՔ ԺԱՅԻՑ ԱՌԱՋ:

Աչք ամենեցուն 'ի Քեզ, Տէր, յուսան և Դու տաս զկերակուր նոցա 'ի ժամու. բանաս զձեռն Քո և լցուցանես զամենեսեան բաղցրութեամբ կամօք Քովբ:

Ամենքի աչքերը դէպի Քեզ են նայում, Տէր, և Դու տալիս ես նրանց կերակուր ժամանակին. բաց ես անում Քո ձեռքը և լիացնում ես ամենքին Քո ողորմութիւնով:

Այս աղօթքով մենք դարձնում ենք մեր աչքերը Աստրժուն, խոստովանում և ընդունում ենք, որ Նա մեր Տէրն է ամենայն ժամանակ և, ինչպէս հայր, հոգում է մեր մարմնական կերակրի մասին: Ընդունում ենք նաև, որ Նա ողորմած է և ամենքին իւր ողորմութիւնով տալիս է, ինչ որ հարկաւոր է:

№ 7. ԱՂՈԹՔ ԺԱՅԻՑ ՅԵՏՈՑ:

Տէր Յիսուս, լցաք 'ի բարութեանց

Քոց: Տացուք գոհութիւն Տեառն Աստուծոյ մերոյ, Հօր, Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Զլիութիւն սեղանոյս անհատ և աննուազ արասցէ Քրիստոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեաց և լիացոյց՝ Նմա փառք յաւիտեանս: Ամէն:

Տէր Յիսուս, լիացանք Քո բարութիւնով: Ուրեմն շնորհակալ լինենք մեր Տէր Աստուծոց—Հօրից, Որդուց և Սուրբ Հոգուց: Մեր Քրիստոս Աստուածը, որ մեզ կերակրեց և լիացրեց, թող անպակաս անէ այս սեղանի լիութիւնը: Նրան է վայելում փառք յաւիտեանս: Ամէն:

Այս աղօթքով մենք նախ՝ շնորհակալութիւն ենք անում Յիսուս Քրիստոսին այն բանի համար, որ Նա մեզ կերակրեց Իւր երկրաւոր բարիքներով և ապա՝ շնորհակալութիւն անելով և փառք տալով սուրբ Երրորդութեանն, խնդրում ենք, որ միշտ անպակաս անի մեզանից իւր ողորմութիւնը:

№ 8. ԱՂՈԹՔ (ԺԱՄԱՄԱՌՈՒՑ) ՔՐԻՍՏՈՑՈՍԻ ԵՐՐՈՒԹԵԱՆ:

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց, նմա փառք յաւիտեանս: Ամէն:



185-2014  
(1004)  
19684

հուանը յաղթեց և իւր յարութիւնով մեզ կեանք տուեց. նրան յաւիտենական փառք: Ամէն:

Այս աղօթքով մենք խոստովանում ենք և ընդունում,  
ա) որ Քրիստոսը յարութիւն առաւ մեռելներից, այսինքն՝  
թէ և նա մեռաւ մարմնով, բայց երրորդ օրը կենդանա-  
ցաւ, և բ) նա իւր մեռելով՝ մահը ձշնչացրեց և ցոյց  
տուեց, որ մենք ևս, յուսով մեռնելով, դարձեալ պէտք  
է կենդանանալ, յարութիւն առնենք, և դորանով նա  
մեզ նոր կեանքի արժանացրեց:

№ 9. ԱՂԹՔ ԹԵՎԵՒՈՐԻ ՀԵՄԵՐ:

Տէր Աստուած մեր, կեցն՛ զամենաբարե-  
պաշտ թագաւորն և զՎայսրն ամենայն Ռու-  
սաց-զՆիկոլայ Ալէքսանդրովիչն: Զօրացն՛  
զՆա, օգնեան՛ զաւակաց և զօրաց Նորա՝ պա-  
հելով զամենեսին ՚ի խաղաղութեան:

Տէր Աստուած մեր, կեանք տուր ամենաբարեպաշտ թա-  
գաւորին և ամենայն Ռուսաց Վայսր-Նիկոլայ Ալէքսանդրովիչին:  
Զօրացրո՛ւ նրան, օգնիր նրա զաւակներին և զօրքերին և ամեն-  
քին պահպանիր խաղաղութեան մէջ:

Այս աղօթքով մենք խնդրում ենք մեր Տէր Աստու-  
ծուն, թագաւորների Թագաւորին, որ նախ՝ կեանք տայ  
ամենայն Ռուսաց ամենաբարեպաշտ Թագաւոր-Վայսր Նի-  
կոլայ Ալէքսանդրովիչին. երկրորդ՝ զօրացնի նրան իւր  
թշնամիների պէմ. երրորդ՝ օգնի նրա զաւակներին և

զօրքերին և չորրորդ՝ նրա հովանաւորութեան տակ զբա-  
նուած բոլոր ժողովրդին պահպանի խաղաղութեան մէջ:

№ 10. ԱՂԹՔ ՍՈՒՐԻ ԱՍՏՈՒԾԱԾԻՆԻ:

Անկանիմք առաջի Քո, սուրբ Աստուա-  
ծածին, և աղաչեմք զանարատ զՎոյսր: Բա-  
րեխօսեան վասն անձանց մերոց և աղաչեան  
զՄիածին Որդիդ, փրկել զմեզ ՚ի փորձու-  
թիւնէ և յամենայն վտանգից մերոց:

Ընկնում ենք Քո առաջ, սուրբ Աստուածածին, և աղաչում  
անարատ Կուսիդ, որ բարեխօսութիւն անես մեր անձանց հա-  
մար և խնդրես Միածին Որդուդ, որ փրկէ մեզ փորձանքից և  
ամեն տեսակ վտանգներից:

Այս աղօթքի մէջ մենք սուրբ Կոյս Մարիամին ա-  
նուանում ենք, ա) Աստուածածին, որովհետև նա ծնաւ  
Յիսուսին, որ էր Աստուած և մարդ, և անարատ, որով-  
հետև նա սուրբ էր, մեղք չ'ունէր. բ)՝ ընկնելով և երկըր-  
պագեղով նրան՝ խնդրում ենք, որ բարեխօսի մեզ համար  
և աղաչի իւր Միածին Որդուն, որ փրկէ մեզ ամեն տե-  
սակ փորձանքներից և մեզ վրայ գալիք վտանգներից. գ)  
Միածին ենք անուանում Յիսուսին, որովհետև բացի  
նրանից ուրիշ որդի չունի Աստուած ըստ էութեան, ինչ-  
պէս չ'ունէր այլ սրբի սուրբ Կոյսն Մարիամ՝ ըստ մարդ-  
կութեան:

№ 11. ԱՂՈԹՔ ԱՌԱՆՈՏԵԱՆ:

Գոհանամք զՔէն, Տէր Աստուած մեր, որ զարթուցեր զմեզ 'ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան Քո: Զարթո՛ն զմիտս մեր արդարութեամբ առ Քեզ, Տէր Աստուած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն Քո, եկեսցէ և բնակեսցի առ մեզ Աստուածութիւն Քո և ողորմութիւն Քո հովանի և պահապան լիցի 'ի վերայ պաշտօնէից Քոց: Եւ զմեզ զծառայսս Քո արժանի արն 'ի տուէ և 'ի գիշերի և յամենայն ժամու միշտ խորհիլ 'ի սէր պատուիրանաց Քոց և գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ, այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Ղնորհակալ ենք Քեզանից, Տէր Աստուած մեր, որ Քո ողորմութեան շնորհիւ զարթեցրիր մեզ քնած տեղից: Զարթեցրու մեր միտքը արդարութիւնով դէպի Քեզ, Տէր Աստուած մեր, որ մեր աչքերը տեսնեն Քո փրկութիւնը, գայ և բնակուի մեր մէջ Քո Աստուածութիւնը և Քո ողորմութիւնը հովանի և պահապան լինի Քո ծառաների վերայ: Եւ մեզ—ծառաներիդ՝ էլ արժանի արն գիշեր և ցերեկ և ամեն ժամանակ Քո պատուիրանների վրայ մտածել և Ղնորհակալութիւնով փառաւորել Հօրը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և յաւիտեանս: Ամէն:

Այս աղօթքով մենք շնորհակալութիւն ենք յայտնում մեր Տէր Աստուծն, որ Նա Եւր ողորմութեամբ զարթեցրեց մեզ քնից. յետոյ խնդրում ենք—1)՝ որ Նա զարթեցնի և մեր մտաւոր աչքերը, որ տեսնենք Նրա մեղտուած բարիքներն ու ողորմութիւնը. 2)՝ որ՝ մաքուր պահենք մեր սիրտը, որ Աստուած գայ և բնակուի Նրա մէջ և՛ տեսնելով մեր բարի գործերը՝ ողորմի ու պահպանի մեզ ամեն տեսակ փորձանքներից և 3)՝ խնդրում ենք, որ միտք, կարողութիւն և շնորհք տայ մեզ, որ ամեն ժամանակ Նրա պատուիրանները աչքի առաջ ունենանք ու կատարենք և՛ հասկանալով մեր որդիական պարտականութիւնները, փառք տանք և շնորհակալ լինենք Նրանից:

№ 12. ԵՐԵՎՈՏԵԱՆ ԱՂՈԹՔ:

Տէր Աստուած մեր, Դու պահեա՛ն զմեզ խաղաղութեամբ՝ 'ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի. ընդ սուրբ երկիւղ Քո բեւեռեալ պահեա՛ն զմիտս և զխորհուրդս մեր, որպէս զի յամենայն ժամ Քե պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամոյն և Քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Տէր Աստուած մեր, Դու պահիր մեզ խաղաղութեամբ այս գիշեր և ամեն ժամանակ: Քո Սուրբ երկիւղիդ մէջ հաստատ պահիր մեր միտքը և խորհուրդը, որ ամեն ժամանակ անփորձ

և ազատ լինինք թշնամու որոգայթից: Եւ Քեզ—Յօրգ, Որդուդ  
և Սուրբ Հոգուդ—տանք օրհնութիւն և փառք այժմ և միշտ և  
յաւիտեանս յաւիտեանից: Ամէն:

Այս աղօթքով մենք՝ Աստուծոն Տէր անուանելով՝ խընդ-  
րում ենք. 1)՝ որ մեզ խաղաղութեան մէջ պահի՝ թէ  
գիշեր և թէ ամեն ժամանակ. 2)՝ մեր միտքը և խոր-  
հուրդը իւր սուրբ երկիւղի մէջ պահի, որ կարողանանք  
անվտանգ պահպանուել թշնամու որոգայթներից և 3)՝  
խոստանում ենք միշտ փառք և օրհնութիւն տալ Սուրբ  
Երրորդութեանն:

**ՅԲԳԲՈՐԳ ՄԱՍԷ:**

**ԴԼԽԱՈՐ ՏՅՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՑ ՊԵՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ:**

№ 1. Մարիամ Սուրբ Կուսի ծնունդը:

Նազարէթ բաղաբում կենում էին եր-  
կու բարեպաշտ ամուսիններ՝ Յովակիմ և  
Աննա: Երկուսն էլ Դաւթի ցեղից էին:  
Նրանք որդի չունէին և այս բանը շատ էր  
տրտմեցնում նրանց: Այս պատճառով նրանք  
իրանց աղօթքների մէջ խնդրում էին Աս-  
տուծուն, որ մի որդի տայ և ուխտ դրին,  
—եթէ Աստուած կատարի նրանց խնդիրը,

ընծայեն նրան Աստուծոն: " Աստուած լսեց  
նրանց աղօթքը և տուեց մի աղջիկ, որին  
անուանեցին Մարիամ:

Այս տօնը կատարվում է Սեպտ. 8-ին:

№ 2. ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԺԱՅՈՒՄՆ ՏԱՃԱՐԻՆ:

Երբոր Սուրբ Կոյս Մարիամն երեք տա-  
րեկան դարձաւ, ծնողները տարան Նրան  
Երուսաղէմ՝ Աստուծոն ընծայելու. Քաջա-  
նայապետն ընդունեց նրան և օրհնեց: Տա-  
ճարի շուրջը շատ բնակարաններ կային, որ-  
տեղ կենում էին բարեպաշտ այրիներ, կոյ-  
սեր և Աստուծոն նուիրուած մանուկներ: Այս-  
տեղ Յովակիմ և Աննան թողին Մարիա-  
մին: Մարիամը մեծանում էր և պարա-  
պում էր աղօթքով, Սուրբ գիրքը կարդա-  
լով և ձեռագործով:

Այս տօնը կատարվում է Նոյեմբերի 21-ին:

№ 3. ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԱՆԵՏՈՒՄԸ:

Սուրբ Կոյս Մարիամը դեռ տաճա-  
րումն էր, որ Նրա ծնողները վախճանուե-  
ցան. Նա մնաց որբ: Երբոր Նա 14 տա-  
րեկան դարձաւ, Նրա դաստիարակները կու-

մեցան Նրան ամուսնացնել, բայց Նա ասաց, որ ուխտել է Աստծուն—միշտ կոյս մնալ: Այն ժամանակ քահանաները յանձնեցին Նրան իւր ազգական ծերունի Յովսէփին, որին յայտնեցին և Սուրբ Կոյս Մարիամի ուխտը:

Ծերունի Յովսէփը բնակվում էր Գալիլիայի Նազարէթ քաղաքում և պարապում էր հիւսնութեամբ: Մարիամը գնաց նրատուն և բնակուեցաւ:

Մի անգամ, երբ Սուրբ Կոյս Մարիամն աղօթում էր, Գաբրիէլ հրեշտակապետն երևեցաւ Նրան և ասաց. «Ուրախացիր Մարիամ: Տէրը Քեզ հետ է, օրհնուած ես Դու կանանց մէջ: Սուրբ Հոգին կը գայ Քո վերայ և Բարձրեալի զօրութիւնը հովանի կը լինի Քեզ: Դու Որդի կ'ունենաս և կ'անուանես Նրան Յիսուս: Նա կը լինի մեծ և կը կոչուի Բարձրեալի Որդի: Աստուած կը տայ Նրան Դաւթի աթոռը՝ և Նրա թագաւորութիւնը վերջ չի ունենալ»: Սուրբ Կոյս Մարիամը խոնարհութեամբ ընդունեց այս աւետիքը:

Այս տօնը կատարվում է Ապրիլի 7-ին:

№ 4. ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԻՐԸ:

Քրիստոսի ծննդեան ժամանակ Օգոստոս Կայսրը կամեցաւ աշխարհագիր անել: Նա հրամայեց, որ իւրաքանչիւր հրէայ գնաց իւր հայրենի քաղաքը: Յովսէփը և Մարիամը, որոնք Դաւթի ցեղից էին, գնացին Նազարէթից Բեթղեհէմ: Նոքա քաղաքի մէջ իջևանելու տեղ չ'գտան և բնակուեցան մի այրի մէջ, որտեղ հովիւներն իրանց ոչխարներն էին պահում ցուրտ և անձրեային եղանակներին: Այս այրի մէջ գիշերը Սուրբ Կոյս Մարիամը ծնաւ իւր Միածին Որդին. Նա փաթաթեց Նրան խանձարուրում և դրաւ մսուրի մէջ:

Այդ գիշերը Բեթղեհէմցի հովիւներն իրանց ոչխարներն պահում էին դաշտում: Տիրոջ հրեշտակն երևեցաւ նրանց և ասաց. «Մի վախենաք, ես աւետում եմ ձեզ մեծ ուրախութիւն. — Դաւթի քաղաքի մէջ ձեզ համար Փրկիչ ծնաւ: Եւ ահա այս կը լինի ձեզ նշան, — դուք կը գտնէք Մանկանը խանձարուրում փաթաթած և մսուրի մէջ դրած»: Այդ միջոցին յանկարծ շատ հրեշտակներ

երևեցան երկնքում և սկսեցին երգել. „Փնօք Աստծուն երկնքումը, երկրի վերայ խաղաղութիւն և մարդկանց մէջ ուրախութիւն“: Երբոր հրեշտակները վերացան երկինք, հովիւները գնացին և՛ ինչպէս հրեշտակն ասել էր, գտան Մանուկին խանձաբուրում փաթաթած և մսուրի մէջ դրած: Երկրպագութիւն տուին և յետ դարձան:

Այս տօնը կատարվում է Յունվարի 6-ին:

№ 5. ՅԻՍՈՒՍԻ ԲՆՈՒՄՆՈՐԵՆՑ ՏԵՃԵՐ ՏԵՆՆԵԼԸ:

Մովսէս մարգարէի օրէնքով ամեն մի անդրանիկ արու զաւակ՝ նրա ծննդեան բառաններորդ օրը, տանում էին Երուսաղէմի տաճարը և այնտեղ նրա համար զո՛հ բերում: Հարուսանները մի տարևոր գառն էին զոհում, իսկ աղքատները—մի զոյգ տատրակ կամ աղաւնի:

Երբոր Յիսուսը բառասուն օրական դարձաւ՝ Մարիամ Սուրբ Կոյսը և Յովսէփը տարան Նրան Երուսաղէմի տաճարը: Նրանք իրանց հետ տարան իբրև զո՛հ մի զոյգ աղաւնի: Այդ միջոցին Երուսաղէմում

կենում էր մի արդար ծերունի մարդ, Սիմէօն անունով: Սուրբ Հոգին առաջուց Նրան յայտնել էր, թէ՛ չ՛պիտի մեռնի, մինչև չ՛տեսնէ Քրիստոսին: Երբոր Մանուկին բերին տաճար, Սիմէօնը Սուրբ Հոգով իմացաւ: Նա դուրս եկաւ Նրա առաջ, դիրկն առաւ Նրան, փառք տուեց Աստծուն և ասաց. „Տէր, այժմ Քո խօսքիդ համեմատ արձակիր Քո ծառայիդ, որովհետև իմ աչքերը տեսան Փրկչին, Արին պատրաստեցիր ժողովրդի համար“: Յովսէփը և Մարիամը զարմանում էին այս խօսքերի վերայ: Տաճարում կար և մի մարգարէուհի՝ Աննա անունով, նա էլ փառաբանում էր Աստծուն և ամենին ասում, թէ այս Մանուկը խոստացեալ Փրկիչն է:

Այս տօնը կատարվում է Փետրուարի 14-ին:

№ 6. ԲՐԻՍՏՈՍԻ ՄԿԲՏՈՒԹԻՒՆԸ:

Յորդանան գետի ափերում բնակվում էր մի մարգարէ՝ Յովհաննէս անունով: Նա քարոզում էր ժողովրդին և ասում. „Ապաշխարեցէ՛ք, երկնքի արքայութիւնը մօտեցել

է: Նրա մօտ գալիս էին ամեն կողմից մարդիկ և որոնք իրանց մեղքերը խոստովանում էին, Յովհաննէսը մկրտում էր նրանց Յորդանանի մէջ:

Երբոր Յիսուսը երեսուն տարեկան դարձաւ, Նազարէթից եկաւ Յովհաննէսի մօտ՝ մկրտուելու: Յովհաննէսը հրաժարուեցաւ նրան մկրտելուց և ասաց. «Ես պէտք է Քեզանից մկրտուեմ, Դու ինձ մօտ ես գալիս»: Բայց Յիսուսը պատասխանեց. «Թող տուր, որովհետեւ այսպէս պէտք է կատարուի ամեն արդարութիւն»: Յովհաննէսը մկրտեց Յիսուսին: Երբոր Յիսուսը դուրս եկաւ ջրից, երկինքը բացուեց և Սուրբ Հոգին աղաւնու կերպարանքով իջաւ նրա վրայ: Երկնքից էլ ձայն լսուեցաւ, թէ «Դա է իմ սիրելի Արդին, Արին ես հաւանեցի»:

Այս տօնը կատարվում է Յունվարի 6-ին:

№ 7. Թ Ե Գ Կ Ը Զ Ե Բ Գ:

Հրէաներն ամենայն տարի կատարում էին Եգիպտոսից դուրս գալու տօնը, որ կոչվում էր Զատիկ: Յիսուսը այդ տօնից

վեց օր առաջ եկաւ Բէթանիա գիւղը և այնտեղից ճանապարհ ընկաւ դէպի Երուսաղէմ: Նրա յետեից գնում էր ժողովրդի մեծ բազմութիւն: Նա հասնելով Զիթենեաց լեռը՝ հրամայեց իւր աշակերտներից երկուսին, որ մօտակայ գիւղից մի աւանակ բերեն: Աշակերտները բերին աւանակը և փռելով նրա վրայ իրանց շորերը՝ նստեցրին Յիսուսին: Շատերը հաւատացին, որ Քրիստոսը Դաւթի ցեղից խոստացած Փրկիչն է և սկսան պատուել նրան: Ոմանք արմաւենու ճիւղեր էին կտրում և ճանապարհի վրայ ձգում. ոմանք էլ իրանց շորերն աւանակի ոտքերի տակն էին փռում և այս փառաբանական երգն երգում. «Ովսաննա (փրկութիւն) Դաւթի Արդուն, օրհնեալ է Տիրոջ անունով եկող Թագաւորը»: Քաղաք մտնելու ժամանակ Քրիստոսի առաջ մեծ բազմութիւն դուրս եկաւ և ով որ նրան չէր տեսած, հարցնում էր. «Ո՞վ է Սա, ժողովուրդը պատասխանում էր.— Սա Գալիլիայի Նազարէթ քաղաքից եկած Սարգարէ Յիսուան է:

Այս տօնը կատարվում է Զատիկից մի շաբաթ առաջ:

№ 8. ՅԻՍՈՒՍԻ ԽՆՁԵԼՈՒԹԻՒՆԸ:

Չատկի տօնից մի քանի օր առաջ Յիսուսը եկաւ Երուսաղէմ: Յիսուսի թշնամիները—Տրէից քահանաները, կարգացողները և ժողովրդի ծերերը հաւաքուեցան և խորհուրդ արին, որ սպանեն Յիսուսին: Նրանք բռնեցին նրան և տարան Պիղատոսի մօտ, որ երկրի կառավարիչն էր, և սկսեցին բամբասել ու չարախօսել նրա մասին, թէ նա բարոգում է և մոլորեցնում ժողովրդին և թէ նա Իւսէր Իրան Աստու Որդի է անուանում և արգելում է հարկ տալ Կայսեր: Պիղատոսը նրանց սրտերը շահելու համար՝ հրամայեց Յիսուսին խաչել:

Զինուորները տարան Յիսուսին Գողգոթա, հանեցին Նրա շորերը և խաչեցին: Նրա աջակողմն ու ձախակողմն էլ խաչեցին երկու աւազակներ: Յիսուսի խաչի վրայ գրուած էր. «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Տրէից»: Ամենքը ծաղրում էին Նրան, բայց Նա աղօթում էր խաչի վրայ նրանց համար, որ Աստուած ներէ:

Երբոր Յիսուսին խաչեցին՝ առաւօտեան

ժամը 9-ն էր: Տասն երկու ժամին երկրիս երեսը խաւար պատեց և աստղերն երևեցան: Ժամը երեքին Յիսուսը աղաղակեց. «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ». և մի փոքր ժամանակից յետոյ էլ ասաց. «Ծարաւ եմ»: Զինուորներից մէկը սպունգը թաթախեց բացախի մէջ և եղէգի ծայրով մօտեցրեց Նրա բերանին: Յիսուսը բացախն ընդունեց և ասաց «Հայր, իմ Հոգին Քո ձեռն եմ աւանդում»: Յետոյ գլուխը խոնարհեցրեց և աւանդեց հողին:

Այս ժամանակ արեգակը խաւարեցաւ, երկիրը շարժեցաւ և տաճարի վարագոյրը պատառեցաւ: Ներկայ եղող հարիւրապետը և ժողովուրդը տեսնելով այս՝ ասացին. «Արդարև Սա Աստուծոյ Որդի էր»:

Այս տօնը կատարվում է աւագ ուրբաթ օրը:

№ 9. ՅԻՍՈՒՍԻ ԹՆՂՈՒՄԸ:

Յովսէփ Արեմաթացին, որ Յիսուսի ծածուկ աշակերտն էր, եկաւ Պիղատոսի մօտ և խնդրեց, որ թոյլ տայ իրան Յիսուսի մարմինը խաչից իջեցնել ու թաղել: Պիղա-

տոսը տեղեկանալով, որ Յիսուան արդարեւ մեռել է, թոյլ տուեց:

Գողգոթա եկաւ և՛ Նիկողիմոսը, որ նոյնպէս Յիսուսի ծածուկ աշակերտ էր: Յովսէփը պատրաստեց մաքուր կտաւ, իսկ Նիկողիմոսը բերեց հարիւր լիտրի չափ անուշահոտ իւղ: Գողգոթայի մօտ Յովսէփն ունէր պարտէզ և այդ պարտիզի մէջ կար մի այր: Յովսէփը և Նիկողիմոսը իջեցրին խաչից Յիսուսի մարմինը, օձեցին և պատեցին կտաւով և դրին այրի մէջ, իսկ գերեզմանի դրանը դրին մի մեծ քար և գրնացին:

Հրէաների քահանայապետներն եկան Պիղատոսի մօտ և խնդրեցին զինուորներ կանգնացնել Յիսուսի գերեզմանի մօտ, որ պահպանեն գերեզմանը, որպէս զի Յիսուսի աշակերտները գիշերով չը գողանան Նրա մարմինը և չը տարածեն ժողովրդի մէջ, թէ նա յարուցիւն առաւ: Պիղատոսը հրամայեց զգուշանալ: Նրանք գնացին կրնքեցին գերեզմանի քարը և պահպաններ դրին:

Այս տօնը կատարվում է աւագ ուրբաթ օրը:

№ 10. ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ:

Կիւրակի առաւօտեան վաղ Քրիստոսի գերեզմանի մօտ մի մեծ շարժ եղաւ: Տիրոջ հրեշտակն երկնքից իջաւ, գերեզմանի քարը մի կողմը գլորեց և նստեց նրա վրայ: Նրա երեսը փայլակի նման էր և շորերը ձիւնի նման սպիտակ: Այդ ժամանակ Յիսուսը յարուցիւն առաւ մեռելներից: Պահապանները տեսնելով այս՝ երկիւղից գետինն ընկան—ինչպէս մեռածներ: Եւ երբոր ուշքի եկան՝ գնացին պատմեցին, ինչոր պատահել էր:

Այս ժամանակ Գալիլիացի կանայք—Մարիամ Մագդաղինացին, Մարիամ Յակովբեանը, Սողոմէն և ուրիշներն եկան Յիսուսի գերեզմանի մօտ, որ օձեն Նրա մարմինը: Նրանք մտան պարտէզը և տեսան, որ քարը գլորած է գերեզմանից: Մարիամ Մագդաղինացին երկիւղից վազեց քաղաք և պատմեց Յիսուսի աշակերտներին: Միւս կանայք մօտեցան այրին և տեսան երկու հրեշտակներ, որոնք աւետեցին, թէ Քրիստոս յարուցիւն առաւ մեռելներից:

№ 11. ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՐԸՉՈՒՄԻ:

Քրիստոսի յարութիւնից քառասուն օր յետոյ՝ աշակերտները հաւաքուեցան վերնատան մէջ: Քրիստոսն երևեցաւ նրանց և ասաց. „Ես կ'ուղարկեմ ձեզ իմ Հօր խոստացած Սուրբ Հոգին. դուք Երուսաղէմից չը հեռանաք, մինչև որ զօրութիւն կ'առնուք“: Յետոյ նրանց հետ գնաց Բեթանիա գիւղը և՝ Չիթենեաց լերան վրայ կանգնելով՝ օրհնեց նրանց և համբարձաւ երկինք: Աշակերտները երկրպագութիւն տուին և ուրախութեամբ յետ դարձան Երուսաղէմ:

Այս տօնը կատարվում է Զատիկից 40 օր յետոյ:

№ 12. Հ Ո Գ Ե Գ Ա Լ Ո Ւ Ս Տ:

Քրիստոսի համբառնալուց յետոյ աշակերտները մնացին Երուսաղէմում: Նրանք միասին ժողովուած վերնատան մէջ՝ իրանց ժամանակն անց էին կացնում աղօթքով, և անհամբերութեամբ սպասում էին մխիթարիչ Սուրբ Հոգուն: Զատիկից յետոյ, յիսուներորդ օրը, առաւօտեան ինն ժամին՝ յանկարծ երկնքից մի ձայն լսուեցաւ, որ սաս-

տիկ հողմի նման էր: Հաւատացեալներին սիրտը լցուեցաւ ուրախութեամբ: Նրանց իւրաքանչիւրի գլխի վրայ հրեղէն լեզուներ երևեցան: Սուրբ Հոգին այսպէս իջաւ նրանց վրայ և տուեց նրանց զօրութիւն, զանազան լեզուներով խօսելու կարողութիւն և բժշկութեան շնորհք:

Այս տօնը կատարվում է 10 օր համբարձումից յետոյ:

№ 13. ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈՒՈՒՄԻ:

Սուրբ Կոյս Մարիամը 16 տարի ապրեց Յիսուսի համբարձումից յետոյ: Նա բընակվում էր Յիսուսի սիրելի աշակերտ Յովհաննիսի մօտ Երուսաղէմում: Մեռնելուց առաջ Նա ցանկացաւ տեսնել Յիսուսի աշակերտներին, որոնք գնացել էին զանազան երկիրներ՝ քարոզելու Նրա Սուրբ Աւետարանը: Բոլոր առաքեալները, բացի Բարդղղիմէոսից, եկան Երուսաղէմ և տեսան Նրա երանական վախճանը: Նրանք վառած լապտերներով և սաղմոս երգելով տարան Աստուածամօր մարմինը Գեթսեմանի պարտէզը և այնտեղ մէկ այրի մէջ ամփոփեցին:

Թագման երրորդ օրն եկաւ Բարդուղիմէոս առաքեալը: Սրա խնդիրքով առաքեալները բաց արին այրը, որի մէջ ամփոփուած էր Տիրամօր մարմինը, բայց չը գտան Նրան այնտեղ, բացի Նրա զգեստներից: Նա վերափոխուել էր:

Այս տօնը կատարվում է Պոստոսին:

№ 14. Գ Ի Ի Տ Ս. Խ Ա Չ Ի:

Վոստանդիանոս մեծ Թագաւորի մայրը— բարեպաշտ Հեղինէ Թագուհին 326 թուին գնաց Երուսաղէմ և այցելեց Սուրբ տեղերը, որտեղ Փրկիչը ծնուել, քարոզել, չարչարուել և խաչուել էր: Նա ցանկացաւ գտնել այն Խաչը, որի վրայ Յիսուսը բարձրացել էր: Փրկչի Խաչը քրիստոնեաների հալածանքների ժամանակ աւազակների խաչերի հետ թաղել էին հողի տակ Գողգոթա սարի վրայ և վրան Հռովմայեցիք առանձին կռատուն էին շինել: Այդ բանը յայտնեց մի ծերունի հրէայ, Յուդա անունով: Թագուհու հրամանով իսկոյն բանդեցին կռատունը, փորեցին և երևեցան երեք

խաչեր և Պիղատոսի զբաժ տախտակը: Բայց որովհետև յայտնի չէր, թէ որն է նրանցից Փրկչական Խաչը՝ ուստի սկսեցին ջերմեռանդութեամբ աղօթել, որ Աստուած ցոյց տայ: Աղօթելից յետոյ խաչերը՝ մէկը միւսից յետոյ՝ դրեցին ննջեցեալի վերայ: Երբոր երրորդ Խաչը դրին՝ ննջեցեալը յարութիւն առաւ: Ժողովուրդը սկսեց երկիւղածութեամբ համբուրել Քրիստոսի Վենարար Խաչը: Բայց որովհետև բոլոր ներկայ եղողները չը կարողացան մօտենալ և մինչև անգամ տեսնել, ուստի Երուսաղէմի Մակարիոս Պատրիարքը կանգնեց մի բարձր տեղ և բարձրացրեց— վերացրեց Սուրբ Խաչը: Ժողովուրդը ծունկ չորեց Փրկչական Խաչի առաջ և երկրպագութիւն տուաւ:

Այս տօնը կատարվում է հոկտեմբեր ամսին:

ՅԲԲՈՐԳ ՄԱՍԷ:

Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հաւատոյ Հանգանակը:

Ա). «Հաւատամք 'ի մի Աստուած, Հայրն»

ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի, երեւեկաց և աներևութից՝:

Հաւատում ենք մի Աստուծոյ, Ամենակալ Հօրը,—երկնքի ու երկրի՝ երեւելիների և աներևոյթների Ստեղծողին:

Այս խօսքերով մենք դաւանում ենք—1)՝ որ կայ մի Աստուած և նա ունի երեք անձինք՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի, 2)՝ որ Հայր Աստուածը Իւր Որդու և Ս. Հոգու հետ ստեղծեց ոչնչից երկինքը, երկիրը և բոլոր տեսանելի և անտեսանելի բաները—արարածները, և 3)՝ որ նա ամենակալ է և բոլոր արարածներին կառավարում է ու պահպանում Իւր իշխանութեան ներքոյ:

Բ). „Եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին, այսինքն իշութենէ Հօր:

Աստուած յԱստուծոյ, լոյս ՚ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած: Նոյն Ինքն ՚ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ՚ի վերայ երկրի երևելիք և աներևոյթիք՝:

(Հաւատում ենք) և մի Տէր Յիսուս Քրիստոս Աստու Որդուն, որ միածին ծնուած է Հայր Աստուծոց, այսինքն Հօր իշխանից:

Աստուած է՝ Աստուծոց, լոյս է՝ լուսից, ճշմարիտ Աստուած է, ճշմարիտ Աստուծոց ծնած և ոչ թէ ստեղծուած:

Նոյն Ինքն Հօր (Աստու) բնութիւնից է, որով ամեն բան եղաւ երկնքի մէջ և երկրի վերայ՝ երևելիներն ու աներևոյթները:

Սրանով դաւանում ենք—1)՝ որ Սուրբ Երրորդութեան երկրորդ անձն է Յիսուս Քրիստոս. 2)՝ որ նա Միածին է, այսինքն՝ չը կայ ուրիշ մէկը նրա նման. 3)՝ որ նա ծնուած է Հօր Աստուծոց յաւիտենից առաջ, ինչպէս լոյսը լուսից (ինչպէս լուսոյ ճառագաթը անընդհատ կերպով յառաջ է գալիս արեգակից) և չէ ստեղծուած և 4)՝ որ նա համարնակից է Հօր Աստուծու հետ և ամենայն ինչ նրանով է եղած:

Գ). „Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ Սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ և զամենայն, որ ինչ է ՚ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք՝:

Որ մեզ՝ մարդկանցս և մեր փրկութեան համար երկնքից իջաւ, մարմին առաւ, մարդ եղաւ և ծնաւ կատարելա կերպով Սուրբ Գոյս Մարիամից Սուրբ հոգով:

Որով (Ս. Հոգով) առաւ մարմին, հոգի և միտք և այն ամենն՝ ինչոր կայ մարդու մէջ՝ ճշմարտապէս և ոչ կարծիքով:

Սրանով մենք դաւանում ենք—1)՝ որ Աստծու Որդին երկնքից իջաւ, այսինքն երկրիս վրայ տեսանելի դարձաւ. 2)՝ որ Նա մարմնացաւ, այսինքն մարդկային բնութիւն առաւ Սուրբ Կոյս Մարիամից Սուրբ Հոգով և 3)՝ որ Նա կատարեալապէս մարդ դարձաւ, այսինքն՝ ոչ թէ միայն մարդկային մարմին ստացաւ, այլ և մարդկային հոգի և միտք, և եղաւ կատարեալ մարդ և կատարեալ Աստուած:

Դ). „Չարչարեալ, խաչեալ և թաղեալ“:

Չարչարուեցաւ, խաչուեցաւ և թաղուեցաւ:

Այս խօսքերով մենք դաւանում ենք, 1)՝ որ Աստրծու Որդին—Յիսուս Քրիստոս չարչարուեցաւ, այսինքն ցաւ զզաց և մարդկային բնութեամբ կրեց բոլոր տանջանքները. 2)՝ որ Նա Իւր յօժար կամքով Խաչի վրայ բարձրացաւ, որ մեզ ազատէ յաւիտենական պատժից և մեղքից և 3)՝ որ Նա մեռաւ մարմնով Խաչի վրայ և թաղուեցաւ ինչպէս մարդ:

Ե). „Յերրորդ աւուր յարուցեալ“:

Երրորդ օրը յարութիւն առաւ:

Սրանով մենք դաւանում ենք, որ Աստծու Որդին—Յիսուս Քրիստոս մարդկային բնութեամբ մեռնելուց յետոյ՝ երրորդ օրը Աստուածային զօրութեամբ կենդանացաւ—յարութիւն առաւ:

Զ). „Ելեալ ՚ի յերկինս Նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր“:

Նոյն մարմնով երկինք բարձրանալով՝ նստաւ Հօր աջ կողմը:

Այս խօսքերով մենք դաւանում ենք, 1)՝ որ Աստրծու Որդին—Յիսուս Քրիստոս մարդկային մարմնով երկինք բարձրացաւ և 2)՝ որ Նա նստաւ Հօր աջ կողմը, որով ցոյց տուեց, թէ Նա ունի Հօր Աստծու հետ հաւասար զօրութիւն և պատիւ:

Է). „Քալոց է Նովին մարմնով և փառօր Հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս, Որոյ Թագաւորութեանն ոչ գոյ վախճան“:

Պէտք է գայ նոյն մարմնով և Հօր փառքով կենդանիներին և մեռածներին դատելու համար, Որի Թագաւորութիւնը վերջ չունի:

Սրանով մենք դաւանում ենք՝ 1)՝ որ Աստծու Որդին—Յիսուս Քրիստոս կրկին պէտք է գայ աշխարհ Հօր փառքով. 2)՝ որ Նա պէտք է դատէ կենդանիներին և մեռածներին և 3)՝ որ այս ահեղ դատաստանից յետոյ կը գայ Նրա փառաց Թագաւորութիւնը, որը վերջ չի ունենալ:

Ը). „Հաւատամք և ՚ի Սուրբ Հոգին յանեղն և ՚ի կատարեալն, Որ խօսեցաւ յօրէնս“

և 'ի մարգարէս և յաւետարանս: Որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ 'ի սուրբնս“:

Հաւատում ենք Սուրբ Հոգուն, որ անեղ (ոչ ոքից չէ եղել) և կատարեալ Աստուած է, որ խօսեց օրէնքների, մարգարէների և աւետարանների միջոցով: Որ Յորդանան գետն իջաւ, Առաքեալին (Քրիստոսին՝ Ասածուց ուղարկուածին) քարոզեց և սրբերի մէջ բնակուեցաւ:

Այս խօսքերով մենք դաւանում ենք—1)՝ որ Սուրբ Երրորդութեան երրորդ անձն է Ս. Հոգին. 2)՝ որ Նա կատարեալ Աստուած է և համագոյակից Հօր և Որդուն և հաւասար Նրանց երկրպագելի. 3)՝ որ մարգարէները և առաքեալները Ասածու կամբք մարդկանց յայտնելու և Սուրբ գիրքը գրելու ժամանակ խօսում և գրում էին Սուրբ Հոգու ներշնչութեամբ և 4)՝ որ երբ Քրիստոս մկրտվում էր Յորդանան գետում, Սուրբ Հոգին իջաւ Նրա վրայ ազանու կերպարանքով և քարոզեց, թէ Նա ուղարկուած է Հօրից և բնակուեցաւ սրբերի մէջ:

Թ). „Հաւատամք և 'ի միմիայն ընդհանրական և առաքելական եկեղեցի“:

Հաւատում ենք միմիայն ընդհանրական և առաքելական եկեղեցի:

Այս խօսքերով դաւանում ենք—1)՝ որ Յիսուս Քրիստոս Իւր հաստատած եկեղեցու—հաւատացեալների—հետ

է միշտ և տալիս է Նրան շնորհ և 2)՝ որ այդ եկեղեցին մի է, Սուրբ է և ընդհանրական ու առաքելական է կոչվում:

Ժ). „'Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց“:

(Հաւատում ենք) մի մկրտութիւն, ապաշխարութիւն և մեղաց քաւութիւն:

Հաւատամքի այս խօսքերով մենք դաւանում ենք—1)՝ որ մկրտութիւնով մարդ ազատվում է սկզբնական մեղքից և արժանի է լինում ստանալու Սուրբ Հոգու շնորհքը և 2)՝ որ ճշմարիտ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ մարդ թողութիւն է ստանում այն մեղքերից, ինչ որ Նա գործել է մկրտութիւնից յետոյ:

ԺԱ). „'Ի յարութիւն մեռելոց“:

(Հաւատում ենք) մեռելների յարութեան:

Սրանով մենք դաւանում ենք—1)՝ որ վերջին դատաստանի օրն Ասածու հրամանով բոլոր մեռած մարդոց մարմինները կը կենդանանան—յարութիւն կ'առնեն և կը միանան իրանց հոգիների հետ և այնուհետեւ կը լինին անապական և անմահ. իսկ որոնք գեռ կենդանի կը լինին, մի ակնթարթում կը փոխուին և կը դառնան նոյնպէս անապական և անմահ: Մեռելների յարութիւնով

կը փոխուի բոլոր տիեզերքը—կը լինի նոր երկինք և նոր երկիր:

— —

ԺԲ). „Ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ՚ի կեանսն յաւիտենականա“:

— —

(Հաւատում ենք) հոգիների և մարմինների վերջին դատաստանին, երկնքի արքայութեանը և յաւիտենական կեանքին:

— —

Այս խօսքերով մենք գաւանդում ենք—1)՝ որ հոգիները և մարմինները պիտի դատուին Յիսուս Քրիստոսից, և իւրաքանչիւրը պիտի ստանայ իւր արածի փոխարէնը և 2)՝ մեռելների յարութիւնից յետոյ կըսկսուի մի նոր — յաւիտենական կեանք: Այս կեանքը արդարների համար կը լինի երանելի, իսկ մեղաւորների համար—տանջանք: Երանելի կեանքը կոչվում է դրախտ և երկնքի արքայութիւն, իսկ տանջանքը—դժոխք:

Տ Ա Ս Ն Պ Ա Տ Ո Ւ Ի Բ Ա Ն Ն Ե Բ:

I. „Ես եմ Տէր Աստուած քո... մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն“:

— —

Ես եմ քո Տէր Աստուածը, ուրիշ աստուածներ չունենաս բացի Ինձանից:

— —

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ ճանաչենք Նրան միայն ճշմարիտ Աստուած. հաւատանք Նրան, յոյս դնենք Նրա վրայ, սիրենք, երկրպագենք և աղօթենք: Արգելում է ուրիշ աստուածներ ունենալ և պաշտել նրանց ինչպէս Աստուած:

Հրեշտակներին և սուրբ մարդոց մենք միայն յարգում—պատվում ենք և մեր այդ պատիւն ու յարգանքը վերաբերում են նրանց աստուածային շնորհին և զօրութեանը, որոնց միջոցով նրանք ծառայել են Աստծուն և կատարել են բարի գործեր:

— —

II. „Մի արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան... մի երկիրպագանիցես նոցա և մի պաշտեսցես զնոսա“:

— —

Ոչ մի բանի նմանութեամբ կուռք մի շինիր և երկրպագութիւն մի տար ու մի պաշտիր նրանց:

— —

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ մենք որ և է բանի նման, կամ որ և է առարկայ կուռք չը շինենք և աստուածային պատիւ չը տանք նրան, այն է՝ չը պաշտենք, յոյս չը դնենք նրա վրայ, ինչպէս Աստծու վրայ:

Սուրբ պատկերների գործածութիւնը կռապաշտութիւն չէ, որովհետև մենք նրանց չենք պաշտում ինչպէս Աստուած, այլ միայն յարգում ենք և այն էլ ոչ թէ ձեռագործ պատկերը, այլ նրա վրայ նկարածի նախատիպը: Նկարուած տէրունական պատկերի մէջ՝ Աստծուն

ենք երկրպագում, իսկ սրբոց պատկերների մէջ՝ յարգում ենք նրանց Աստուածահաճոյ սրբութիւնը:

Սուրբ պատկերներ գործ ածելու նպատակն է, որ մենք՝ նայելով նրանց, յիշենք Աստուծու և Նրա սրբերի գործերը և օրինակ առնենք:

III. „Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո՝ ի վերայ մնտաեաց“:

Չուր տեղ քո Աստուծու անունը մի յիշիր:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ մենք Նրա անունը գործ ածենք իբրև սրբութիւն և յարգենք այն ամենը, ինչոր նրա անուանն է նուիրած— օր. ս. տաճարներ, մատուռներ, պատկերներ և եկեղեցական իրեղէններ:

Նա և՛ պատուիրում է, որ մեր աղօթքների և խօսակցութիւնների ժամանակ երկիրդածութեամբ յիշենք ու արտասանենք Նրա անունը: Չ'երդնունք Նրա անունով զուր տեղ և անարդարութեան ժամանակ. իսկ եթէ երդուել ենք, հաստատ պահենք մեր տուած երդումը: Երդում է կոչվում այն խոստումը, որ արտասանվում է Խաչի և Աւետարանի առաջ՝ քահանայի ներկայութեամբ:

IV. „Յիշեան սրբել զօր շաբաթու, զվեց օր գործեսչիր և արասչիր զամենայն գործս քո, իսկ զեօթներորդ օրն, շաբաթ, նուիրեան Տեառն քում“:

Մտքումդ պահիր, որ շաբաթ օրը սուրբ պահես. վեց օրուայ մէջ քո բոլոր գործերդ արն, իսկ եօթներորդ օրը քո Տէր Աստուծուն նուիրիր:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ շաբաթ օրը (քրիստոնեաներիս համար կիրակի) նոյնպէս և ուրիշ տօն օրերը նուիրենք սուրբ գործերին. Աստուած պատուիրում է կեանքի մէջ այսպիսի կարգ պահպանել, այն է՝ վեց օր աշխատել և գործել մարմնաւոր գործեր, իսկ տօնին հանգստանալ գործերից և կատարել Աստուծու համար գործեր:

Աստուծու համար գործերն են,—եկեղեցի գնալ, ներկայ լինել Աստուածպաշտութեան, աղօթել, կարդալ ս. Գիրքը և սովորել Աստուծու օրէնքները և մեր նմաններին բարութիւն անել—այն է՝ աղքատներին ողորմութիւն տալ, հիւանդներին այցելել, օրբերին խնամք տանել, խեղճերին օգնել՝ և այլն:

Բայց եթէ անյետաձգելի գործ է և հարկը պահանջում է գործել տօն օրերին, ինչպէս են անասուններին կերակուր և ջուր տալ, հրդեհից և հեղեղից մարդիկ ազատել, հիւանդների մասին հոգալ, պատերազմել կամ թըշնամու յարձակմունքին դիմադրել և այլն,—նչ թէ կարելի է, այլ պէտք է անպատճառ անել:

V. „Պատուեան զհայր քո և զմայր, զի բարի լինիցի քեզ և երկայնակեաց լիցիս ՚ի վերայ երկրի“:

Պատուիր քո հօրը և քո մօրը, որ քեզ համար լաւ լինի և երկար ապրիս աշխարհիս մէջ:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ մենք պատուենք մեր ծնողներին և՛ իբրև երախտագիտութեան նշան՝ միշտ յարգանքով վերաբերուենք նրանց և աշխատենք ամեն բանի մէջ ուրախութիւն և մխիթարութիւն պատճառել նրանց: Բացի այդ՝ օգնենք նրանց հիւանդութեան, ծերութեան և կարօտութեան ժամանակ, աղօթենք նրանց համար և կատարենք նրանց բարի խրատները:

Այս պատուիրանով Աստուած նմանապէս հրամայում է, որ մենք յարգենք և այն մարդոց, որոնք ծնողների տեղն են բռնում:

Այս պատուիրանը կատարողներին Աստուած խոստանում է երկար կեանք և բաղտաւորութիւն:

**VI. „Մի սպանաներ“:**

Մի սպանիր:

Այս պատուիրանով Աստուած արգելում է սպանութիւնը, նմանապէս նիւթական և բարոյական վնաս տալը՝ թէ՛ իրան և թէ՛ ուրիշներին:

Սպանութիւնը ներելի է միայն երկու դիպուածներում,—պատերազմի ժամանակ, երբ նա լինում է եկեղեցու օգտի և հայրենիքի փրկութեան համար և շարագործ մարդու մահով պատիժը:

Արգելում է, որ չ՛անենք այնպիսի գործ, ինչոր կարող է վնաս տալ ուրիշի կեանքին, օր.—ծեծ, կոխ, վէճ,

խիստ վարմունք, ոխ, ատելութիւն, նախանձ, բարկութիւն, խօսքով վիրաւորանք և չափից գուրս ստրկական ծառայութիւն:

Իւրաքանչիւր մարդ պարտաւոր է պահպանել թէ ուրիշի առողջութիւնը և թէ իւրը, այլապէս նա ինքնասպանութիւն գործած կը լինի, որ մեծ յանցանք է, իսկ այն դիպուածներում, երբ լինում է թշնամու յարձակմունք, հրդեհ, հեղեղ, ժանտախտ և սրանց նման հասարակական թշուառութիւնների, ամեն մինը բարոյական պարտաւորութիւն ունի չը խնայել իւր առողջութիւնը և մինչև անգամ իւր կեանքն ուրիշների փրկութեան համար:

**VII. „Մի շնար“:**

Չնութիւն մի անիր:

Այս պատուիրանը հրամայում է մեզ, որ մենք մարդուր լինենք և չունենանք սրտի շար ցանկութիւններ և շար մտածմունքներ. հեռանանք վատ խօսակցութիւններից և երգերից:

**VIII. „Մի գողանար“:**

Գողութիւն մի անիր:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ մենք գողութիւն չ՛անենք, չը խլենք, չը յափշտակենք, չը պահենք, և չ՛ծածկենք ուրիշի կարողութիւնը, ուրիշի աշխատանքը և ուրիշի բարի անունը: 2ը թագցնենք

գտած բանը, չը գնենք մեզ յայտնի գողացած իրը: Չը խաբենք առևտրի մէջ և խարդախութիւն չ'անենք չափի ու կշռի մէջ: Չը կտրենք մշակիների, ծառանների վարձը: Մեր պարտքը վճարենք և մեզ պահ տուածը վերադարձնենք:

IX. „Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ“:

Քո ընկերոջ մասին սուտ վկայութիւն մի տուր:


Այս պատուիրանով Աստուած արգելում է մեզ, որ մենք սուտ վկայութիւն չը տանք թէ դատարանում և թէ հասարակութեան մէջ, այլ լինինք ճշմարտախօս: Արգելում է զրպարտելը, բամբասելը, ուրիշի խօսածը կամ գրածը յեղաշրջել և ուրիշ կերպ մեկնելը, մատնելը, վրնասելը, չարութիւն հնարելը, արժանաւորների անուանարկելը, իսկ անարժաններին գովաբանելը:

X. „Մի ցանկանար տան ընկերի քո և մի ամենայնի, որ ինչ նորա իցէ“:

Քո ընկերոջ տան վրայ աչք մի ունենար և ոչ այն բաների վրայ, ինչ որ նրանն է:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ մենք չար աչք, չար ցանկութիւն չունենանք մեր ընկե-

րոջ ունեցածի վրայ. չը նախանձենք նրա բախտաւորութեան յաջողութեան, յառձգադիմութեան և առհասարակ նրա ներքին և արտաքին լաւ կողմերի վրայ: Չ'արատաւորենք և չ'անպատուենք նրան որ և է բանով, չը յափշտակենք նրանից ոչ մի բան և ՚ի չարը գործ չը գնենք նրա բարեմտութիւնը և ընկերական հաւատարմութիւնը, այլ ունենանք սրտի սրբութիւն դէպի նա և լինենք քոհ և բաւական մեր ունեցածով:



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր:

			Սխալ	ուղիղ
Երես	6,	տող 1՝	Ներքևից . . .	հան—կուժեան.
»	17,	» 18	վերևից . . .	Քրիստոսի—Քրիստոսի.
»	26,	» 9	» . . .	յունվարի 5—յունվարի 6.
»	36,	» 6	» . . .	վերափոխուել էր—վերափոխուել էր.
»	39,	» 6	» . . .	երրորդ—երկրորդ.
»	42,	» 14	» . . .	զբաւմ—զբում.
»	43,	» 10	» . . .	աղատում—աղատում.
»	43,	» 14	» . . .	. . . նա—նա.
»	47,	» 15	» . . .	սրբերին—որբերին.

Վաճառվում է Տիֆլիսի «Վենդրոնական գրավաճառանոցում եւ աշխատասիրողի մօտ»:

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

0014144

2013

«Ազգային գրադարան»



NL0014144

